



Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղաքական մասնակցության խթանումը. առկա նախաձեռնությունները, հիմնախնդիրները և հեռանկարները

*Իրինա Ղափլանյան
Աննա Մելիքյան*

- ✉ *Irina Ghaplanyan*
- ✉ *Anna Melikyan*
- ✉ *Center for Gender and Leadership Studies*

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները կամ նրա փոխակալությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Մույն զեկույցը վեր է հանում Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության հետ կապված խնդիրները, ինչպես նաև վերլուծում է որոշումների կայացման գործընթացներում կանանց ներկայացվածության ընդլայնմանն ուղղված մեխանիզմներն ու նախաձեռնությունները: Հեղինակներն առանձնակի ուշադրություն են դարձնում այն նախադրյալների և խնդիրների վերլուծությանը, որոնք խոչընդոտում են վերոնշյալ մեխանիզմների արդյունավետ գործարկումը: Ուսումնասիրության ընթացքում վերլուծվել են ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ, ինչպես նաև իրականացվել է 35 կիսա-ստանդարտացված հարցազրույց ոլորտի փորձագետների՝ այդ թվում կուսակցությունների և դրանց երիտթևերի անդամների, լիազոր պետական մարմինների, ոլորտում ակտիվ ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, գյուղապետերի և ավագանու գործող և նախկին անդամների հետ:

Զեկույցում վերլուծվում են գործող ներպետական և միջազգային իրավական ակտերը, ինչպես նաև տրվում է որոշումների կայացման բարձր մակարդակներում տղամարդկանց և կանանց հավասար հնարավորություններով ապահովելու խնդրով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունների քննական ակնարկ:

Պաշտոնական տվյալների համաձայն, կանայք Հայաստանում կազմում են բնակչության 52.2%¹: Նրանք առավել ակտիվ են կրթության ոլորտում կամ միջին մասնագիտական օղակներում², մինչդեռ կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում և որոշումների կայացման ոլորտում մնում է աննախադեպ ցածր:

Ներկայիս գումարման Ազգային ժողովում ներկայացված է 14 կին պատգամավոր՝ կազմելով առկա 131 տեղերի 10.7%³, չնայած ներդրված քվոտաների և ՀՀ կառավարության որդեգրած դիրքորոշման՝ ապահովել կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր մարմիններում: Կանանց ներկայացվածությունը ցածր է նաև ավագանու կազմում: Այդպես, 2013 թ -ին տեղի

¹ Պաշտոնական վիճակագրությունը հասանելի է www.armstat.am կայքում

² St' u Global Gender Gap Index 2014 Report, Armenia, available at <http://reports.weforum.org/global-gender-gap-report-2014/rankings/>.

³ Պատգամավորների մասին տվյալները հասանելի են <http://www.parliament.am/deputies.php?lang=arm>.

ունեցած ընտրությունների արդյունքում Երևանի ավագանու խորհուրդ է ընդգրկվել 10 կին (65 անդամների 15.4%), իսկ հանրապետության մակարդակով կանայք կազմում են ավագանու անդամների 8.6% (6,164 անդամ, որից կին՝ 534)⁴: Ոգեշնչող չէ նաև իրավիճակը կառավարությունում. 18 նախարարներից միայն 2-ն են կին, այն էլ ղեկավարում են Մշակույթի և Սփյուռքի նախարարությունները, որոնք համարվում են ոչ ազդեցիկ: ՀՀ-ն, լինելով երիտասարդ պետություն, բավականին երկար տարիներ չի ունեցել նաև կին մարզպետ⁵:

Չեկույցի հեղինակները փորձել են լուսաբանել այն պատճառները, որոնք խոչընդոտում են կանանց ավելի ակտիվ մասնակցությանը քաղաքական կյանքին: Իրականացված ուսումնասիրության արդյունքում հեղինակները հանգել են այն եզրակացության, որ քաղաքական կյանքում կանանց առավել ակտիվ ներգրավվածությանը խոչընդոտող հիմնական պատճառներն են հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ արմատացած կարծրատիպերը, քաղաքական համակարգի լուրջ թերությունները, թափանցիկության և հավասար հնարավորությունների բացակայությունը, պետական կառավարման մարմիններում կանանց ներկայացվածության, ըստ էության, ձևական բնույթը, որոնք փաստացի զրկված են որոշումներ կայացնելու կամ ընդունվող որոշումների գործընթացի և իրականացվող քաղաքականության վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից, ընտրովի պաշտոններում կանանց դերի և ներկայացվածության աստիճանի բարձրացմանն ուղղված պետական միջոցառումների անարդյունավետ և ձևական բնույթը, անհրաժեշտ ֆինանսական և քաղաքական ռեսուրսների սղությունը և այլն:

Խնդիրներն ու խոչընդոտները վեր հանելուց հետո հեղինակները վերլուծել են ՀՀ կառավարության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումներն՝ ուղղված քաղաքական կյանքում և որոշումների կայացման գործընթացներում կանանց դերի բարձրացմանը: Չեկույցում վերլուծվել են ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ քվոտաների սահմանումը և Գենդերային հավասարության սպահովմանն ուղղված ազգային ռազմավարության մշակումը և իրականացումը: Վերլուծությունները ցույց տվեցին, որ Կառավարության միջոցառումները հիմնականում ձևական բնույթ են կրում և միտված են գոհացնելու միջազգային կազմակերպություններին՝ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում: Թեև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ կուսակցությունների ընտրացուցակներում նույն սեռի ներկայացուցիչները չեն կարող

⁴ Տե՛ս ավելին "Armenia: What it takes to be a woman in local governance", article available at <http://www.undp.org/content/brussels/en/home/ourwork/democraticgovernance/successstories/armenia--what-it-takes-to-be-a-woman-in-local-governance.html>

⁵ Վիճակագրությունը հասանելի է <http://www.armstat.am/en/?nid=82&id=1601> կայքում

լինել 80% ավելին, այդ քվոտան փաստացի չի երաշխավորում կուսակցության հաղթանակի դեպքում կանանց՝ Ազգային ժողովում կամ ավագանու խորհրդում ներկայացված լինելը, քանի որ խոսքն ընդամենը ընտրացուցակների և ոչ թե ընտրված պատգամավորների թվային մասնաբաժնի մասին է: Արդյունավետ չի իրականացվում նաև Կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը: Այն թեև պարունակում է 53 տարատեսակ միջոցառումներ, որոնք ուղղված են կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը տարբեր ոլորտներում, սակայն կոնկրետ իրականացված միջոցառումները դրվագային բնույթ են կրում և որոշ դեպքերում շատ քիչ կապ ունեն գենդերային հավասարության ապահովման հետ:

Միջազգային կազմակերպություններն աշխատում են և՛ Կառավարության, և՛ տեղական ՀԿ-ների հետ՝ տրամադրելով ֆինանսական, տեխնիկական և փորձագիտական աջակցություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառավարության գործողությունները համակարգված և համապարփակ չեն, կանանց դերի բարձրացման գործընթացի ապահովման գործառնությունը ստանձնել են ՀԿ-ները: Նրանց ջանքերի շնորհիվ մարզերում կանայք հնարավորություն ստացան մասնակցելու կարողությունների բարձրացմանն ուղղված դասընթացներին, այդ թվում նվիրված լիդերության և կառավարման հմտությունների զարգացմանը, նրանց տրամադրվեց ֆինանսական աջակցություն մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և այլն: Սակայն հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ոլորտում ակտիվ ՀԿ-ները համախմբված չեն, մրցակցում են միմիանց հետ, այդ թվում նաև դոնորների աջակցության համար: Արդյունքում ՀՀ-ում չի ձևավորվում կանանց իրավունքերի առաջնորդմանը միտված միասնական ճակատ կամ շարժում, ինչն իրական նախադրյալներ կստեղծեր իրավիճակի վրա ներազդելու և առկա դերաբաշխումը փոխելու համար՝ բարձրացնելով կանանց ազդեցությունը և մասնակցությունը կյանքի տարբեր ոլորտներում:

Հետագոտության արդյունքում հեղինակները հանգեցին հետևյալ եզրակացությունների.

- Կանանց ներգրավվածությունը քաղաքական կյանքում շարունակում է մնալ ցածր ՀՀ իշխանությունների հայտարարած 30%-ից:
- ՀՀ-ում առկա է ուժեղ դիմադրություն կանանց՝ քաղաքական կյանքին ակտիվ մասնակցության դեմ, ինչն արտացոլվում է թե քաղաքական գործիչների հայտարարություններում, թե ՉԼՄ-ներում և թե հասարակության մեջ իշխող կարծրատիպերում: Հաճախ մշակույթն ու ավանդույթները օգտագործվում են կանանց տեղն ու դերը հայկական հասարակությունում ընգծելու համար: Կարծրատիպերը և

նախապաշարմունքները խոչընդոտում են քաղաքական կարիերա սկսելու կամ բարձր պաշտոններ զբաղեցնելու գործում:

- Կիրառված գենդերային քվոտաները էականորեն չեն ազդել իրավիճակի բարելավման վրա, գործող քվոտային համակարգն ընդհանրապես արդյունավետ չէ:
- Կառավարության Գենդերային ռազմավարական ծրագիրը չի պարունակում կիրառելի մեխանիզմներ, որոնք տեսանելի և գնահատելի կարող են լինել հանրության կողմից: Ընդնահուր առմամբ հասարակությունն իրագրելի է Կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների և դրանց արդյունքների մասին:
- Խոշոր կուսակցությունները շարունակում են մնալ փակ և ոչ թափանցիկ "ակումբներ", որոնք հասանելի են միայն "էլիտար" կամ "իրենց կանանց" մասնակցության համար: Արդյունքում ակտիվ, բայց ֆինանսապես անապահով և շրջապատ չունեցող կանայք զրկված են քաղաքականությամբ զբաղվելու հնարավորությունից:
- ՀՀ-ում բացակայում է կանանց հարցերի առաջնորդմանն ուղղված միասնական և համապարփակ օրակարգ, որը կգրավեր հասարակության ուշադրությունը, կշարժեր նրա հետաքրքրվածությունը և կվայելեր աջակցությունը: Կանայք ևս այսօր Հայաստանում հանդես չեն գալիս որպես միասնական ուժ, որը կկարողանար ներգործել դերերի և ազդեցության վերաբաշխման վրա:
- ՀՀ մարզերում բոլոր հաջողված միջաջառումները, որոնց արդյունքում կանայք ընտրվել են զանազան պաշտոնների, իրականացվել են ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից: Սակայն դոնորների ֆինանսական աջակցությունից կախվածությունը բավականին խոցելի է դարձնում տեղական ՀԿ-ներին և որոշ դեպքերում առիթ դառնում մեղադրելու նրանց գրանտակերության և արևմտյան՝ ոչ հայեցի արժեքների առաջնորդման մեջ:

Հեղինակները զեկույցում ներկայացրել են նաև որոշ առաջարկություններ՝ ուղղված իրավիճակի բարելավմանը և մեխանիզմների արդյունավետության բարձրացմանն՝ ընդգծելով գլխավորապես, որ հաջողության համար անհրաժեշտ է միասնականորեն փորձել ներագրել իրավիճակի վրա՝ միավորելով Կառավարության, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ՉԼՄ-ների և կրթական օջախների ջանքերը: